ՇՐՋԱՓԱԿՈՒՄԸ ՄԻԱՅՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԷ

Երկու օր հետո տպագրական ձերկի յուրօրինակ բուրմունքով թարմ թերթեր, հանրապետական և մեզ մոտ տպագրվող, ներառյալ «Պրավդա», չեն ստանա բաժանորդները։ Իսկ ինչո՞ւ. մեր այս ոչ հռետորական հարցին ահա թե ինչ պատասխանեց ՀԿԿ Կենտկոմի հրատարակչության դիրեկտոր Գ. Թորոսյանցը.— Մեր պահեստներում այլևս լրագրական թուղթ չկա ու հիմա ծախսում ենք պետական պաշարից ստացած վերջին տոննաները։ Ինքներդ դատեցեք. սովորաբար մենք միջին հաշվով օրական ծախսում էինք ավելի քան 30 տոննա լրագրական թուղթ՝ մեկ վագոնից մի քիչ պակաս։ Իսկ օգոստոսի 24-ից մինչև հիմա ոչ մի կիլոգրամ չենք ստացել։ Պատճառը միանշանակ է և ուղղակի՝ երկաթուղու արգելափակումը Ադրբեջանի կողմից։ Խոսեմ փաստերով. պաշտոնական տվյալներով այժմ մեր կողքին՝ Ադրբեջանի երկաթուղու Նորաշեն կայարանում կանգնած են մեզ հասցեագրված 15 վագոնները, իսկ առաքող կազմակերպությունները մեզ ոչինչ թուղթ կուղարկեն այսքանն ստանալուց հետո։ Ուրեմն եթե անգամ շրջափակումը հանվի էլ, մենք ոչինչ թղթի մատակարարման ընդհատում կունենանք։ Մենք իհարկե շուտվանից ստիպված կլինենք դադարեցնել թերթերի լույսընծայումը, եթե հանրապետության ղեկավարությունը չօգներ պետական ռեզերվից։ Այժմ մենք ունենք ընդամենը երկու օրվա պաշար այն դեպքում, երբ նորմատիվային կանոններով պիտի մեկ ամսվա պահեստավորում ունենանք։ Մենք դիմել ենք կենտրոնական թերթերի խմբագրություններին, հաղորդակցության ճանապարհների մինիստրության գերատեսչական ամենատարբեր օղակները, անգամ ԽՄԿԿ Կենտկոմ, բայց անարդյունք. Ադրբեջանի երկաթուղին ոչ մի կերպ չի ուզում բարձրացնել ուղեփակոցը, ոչ մի միջամտություն չի վրդովում նրանց դիմադրությունը։ Բայց պակասը ոչ միայն լրագրական թղթինն է, արդեն մեկ ամսով հետ են ընկել առանց այն էլ ուշացող մեր ամսագրերի համարները։ Տպագրական ուրիշ նյութերի կարիք ևս զգում ենք, իսկ բենզինի մասին խոսելն ավելորդ է, մի կերպ հայթայթած թուղթը մեծագույն դժվարությամբ ենք հասցնում տպարան։

Այո, հրատարակչության դիրեկտորի վրդովմունքն ու անհանգստությունը հասկանալի է, որովհետև կարող է կանգնել արտադրությունը, և շիկացած այս պահին, երբ տեղի են ունենում պատմական կարևորության իրադարձություններ, երբ հանրապետության աշխատավորությունը լրատվական ծարավ է զգում ու ամեն րոպե նորության է ապասում, կարող է դադարել թերթի տպագրությունը։ Իսկ բարեկամության ու արդարության մասին խոսելիս ձեռքը արտին դնող մեր հարևանները իրականում շրջափակել են Խորհրդային Հայաստանը։ Եվ այդ շրջափակումը ոչ թե տնտեսական է, այլ քաղաքական, ազգային, հոգևոր ու գաղափարական՝ պարզապես պաշարում...

Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(Արմենպրեսի թղթ.)